ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻ ԱՍՏՎԱԾ ՀՈՒՇԵՐԸ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ՄԱՍԻՆ

Սիմոն Վրացյանը (1882—1969) մոտիկ անցյալի հայ հասարակական-քաղաքական մտքի ակնառու ներկայացուցիչներից է։ Ավելի քան 60 տարի մասնակից լինելով հայության կյանքը վերակազմող քաղաքական, հասարակական և մշակութային բուռն իրադարձություններին՝ նա ամբարել էր անձնական տպավորությունների ու դիտողությունների հսկայական նյութ, մասնակ դարձած թանկագին հուշերի Տարիների հետ, ավելի ու ավելի պահանջ էր զգում թղթին հանձնել հայ «կյանքի ուղիների կայաններից հավաքված այդ իրական պատկերները, այդ անպաճույճ հուշառարկաները։ Ահա այսպես է ստեղծվել, ինչպես Ս. Վրացյանն է գրում, «պարապ փախտի խաղալիք», իր «Կյանքի ուղիներով. դեպքեր, դեմքեր, ապրումներ» հուշերի վեցհատորյակը[1]։ Դեռ նոր էին ավարտվել այս հսկայական աշխատանքի տպագրության հետ կապված բարդությունները ու դժվարությունները, երբ ողողված ընթերցողների և մամուլի համակրական վերաբերմունքից, Ս. Վրացյանը սկսում է շարադրել նաև իր անձնական տպավորությունները կյանքի որոշակի շրջափուլերում իրեն հանդիպած և իր հետ շփված ու համագործակցած հայոց մեծերի մասին, մեծեր, որոնց դիպուկ բնութագրում էր որպես «Անձինք նվիրեալք»։ Հենց այս խորագիրն էր կրում հուշերի և տպավորությունների նոր գլուխը, որի նյութերը կարողացավ խնամքով հավաքել ու դասավորել։ Գիտակցելով, որ վերջին մահը չպետք է թույլ տա իրեն հետևելու հատորի տպագրությանը՝ «երկու ընկերներու պարտականություն տվավ տպարան հանձնելու «Անձինք նվիրեալքը» եղածին պես և հսկելու անոր հրատարակությանը»[2]։ Հատորը պարունակում է երեք փոքրիկ էջագրություններ Մխիթար Սեբաստացու, Իսրայել Օրու և Բաֆֆու վերաբերյալ, մյուսները հուշ-դիմանկարներ են Կոմիտասի, Արմեն Գարոյի, Հովհաննես Զարիֆյանի, Ներսես արք. Մելիք-Թանդյանի, Լեոն Շանթի, Նիկոլ Աղբալյանի, Լեոն Թադևոսյանի (Պապաշա), Եղիսաբեթ Զորյանի (Տիկին Լիզա), Գառնիկ Գյուղալյանի և Խաչատուր Կարմիկյանի մասին։ Երբեք չմոռանալով վերջնական արժեքավորումի մենաշնորհին՝ նա ավելի շատ աշխատում է վրձնել հոգերանական վիճակներ, որոնց շնորհիվ այդ նվիրյալները մեզ են ներկայանում առավել երկրային, իրական-կենցաղային իրավիճակներում։ Եվ հենց դրանում են այդ հուշ-դիմանկարների անուրանալի արժանիքները։ Անշուշտ, հրապարակված հուշերի գրքերով չեն սպառվում Ս. Վրացյանի ամբարած և գրի առած ողջ հուշերը։ Բեյրութի Համազգային դրական պահոցում գտնվող նրա թղթերի նյութերը ցույց են տալիս, որ այստեղ ձեռագիր վիճակում, մասամբ ավարտուն, մասամբ անավարտ առկա են նաև այլ հուշ-դիմանկարներ։ Երբ դրական պահոցի տնօրինության բարեհաճ թույլտվությամբ ծանոթանում էինք Ս. Վրացյանի թղթերի ուղեցույց-ցանկին, մեր ուշադրությունը գրավեց ականավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցին նվիրված հուշերի, ինչպես նաև Ադոնցի՝ Վրացյանին ուղղված երկու նամակների մասին ցուցումը։ Այդ նյութերը, ուսումնասիրության համար, սիրահոժար տրամադրվեցին մեզ։

Ս. Վրացյանը Ն. Ադոնցին առաջին անգամ հանդիպել է 1908 թ. վերջերին՝ Ս. Պետերբուրգում, որ նա ուսանում էր համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, իսկ Ադոնցն էլ պատրաստվում էր պրիվատ-դոցենտի հաստիքը դրաղեցնելու համար հանդես դալ մեծաքի դասախոսություններով։ Առաջին հանդիպման վառ նկարագրությունն է, որ պատկերված է ներքևերկրվող հուշ-էջերում։ Այնուհետև Ս. Վրացյանը Ադոնցի հետ շփվել է մինչև 1910 թ., մինչև համալսարանից հեռանալը, այդ ընթացքում նոանք ունեցել են հաճախակի հանդիպումներ «Սանկտ-Պետերբուրգի հայկական խմբակի», «Սանկտ-Պետերբուրգի ուսանողական ժողովի կազմակերպության շրջանակներում, քանզի երկուսն էլ անդամակցում էին դրանց։ բացի այդ, Ադոնցը երկար տարիներ եղել է Ս. Պետերբուրգի հայկական եկեղեցիների հոգա-

---

1 Ս. Վ ր ա ց յ ա ն, Կյանքի ուղիներով, հ. 1—6, Բեյրութ, 1955—1967։

2 Ս. Վ ր ա ց յ ա ն, Անձինք նվիրեալք, Բեյրութ, 1969, տե՛ս «երկու խոսք», մատեր, էջ 5։

բանձության անդամ և տպա փոխնախագահ։ Նրանց հաջորդ հանդիպումը տեղի է ունեցել շատ տարիներ անց՝ 1921 թ., Փարիզում, երբ երկուսն էլ որպես տարագիրներ հաստատվել էին այստեղ։ Ս. Վրացյանը Ադոնցի հետ հանդիպելու հաճախակի եղել է լինում, անգամ պատմաբանի՝ Բրյուսել տեղափոխվելուց (1931) հետո։

Հատկանշական է, որ Ն. Ադոնցը Բրյուսելից աշխատակցում է Վրացյանի խմբագրած «Վեմ» եռամսյա հանդեսին (1933—1939), նրանց միջև հաստատվում է նամակագրություն։ Իսկ շատ տարիներ անց Ս. Վրացյանը խորին պատկառանքով ու ջերմ զգացմունքներով գրախոսում է նշանավոր պատմաբանի հետմահու լույս տեսած երկերի ժողովածուն[4]։

Պետերբուրգյան և փարիզյան այդ հանդիպումների տպավորությամբ է, որ ստեղծվել է ներքոբերված հուշ-դիմանկարը։ Նյութերի ուսումնասիրությունը մեզ բերել է այն եզրակացության, որ այս հուշերը գրի են առնվել 60-ական թվականների կեսերին, ենթադրաբար և մաս էին կազմելու «Անձինք նվիրեալք» երկրորդ հատորին։ Հրապարակվող հուշերը ձեռագիր են։ Ինքնագիրը պահվում է Համազգայինի Բեյրութի գրասենյակի Սիմոն Վրացյանի անձնական ֆոնդում։ Այն հրապարակվում է նույնությամբ, առանց որևէ միջամտության։

Պ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պրոֆ Ն. Ադոնց

Պրոֆ. Ադոնցը Բրյուսելից Փարիզ պիտի գար[1]։ Ժամադրություն էր նշանակել, որ այսինչ օրը, երեկոյան ժամը 8-ին, սպասեմ իրեն, կաֆե Վերսայլում՝ Մոնպարնաս կայարանի դիմաց։

Ճիշտ ժամը 8-ին ես նշանակված սրճարանում էի։ Տեղ գրավեցի, պատվիրեցի ավանդական կաֆե կրեմը* և սկսեցի սպասել։

Հինգ վայրկյան, քառորդ ժամ, կես ժամ—Ադոնցը չերևաց։ Անցավ մեկ ժամ Ադոնցը չկա ու չկա։ Օրվա թերթի ծանուցումներն էլ կարդացի, բայց Ադոնցը չհայտնվեց...

Հաջորդ օրը՝ մի խիստ par pneumatique[2] պրոֆեսորական լվացողական. դու ի՞նչ մարդ ես, որ ժամադրությունը չես հարգում։ Երկու ժամ նստել եմ սրճարանում, չբարեհաճեցիր գալ, և այլն։

Նույն երեկո, միևնույն ժամին, հանդիպում ենք նույն սրճարանում։

Նշանավոր կաֆե Վերսայլում սեղանները դասավորված էին այնպես, որ նստարանների մեկ շարքը մյուսից բաժանվում էր բարձր պատնեշով, որի վերևը դնում էին գլխարկներն ու վերարկուները։ Եվ պարզվեց, որ երեկ մենք նստել ենք երկու ժամ մեջք-մեջքի, ջղայնացած սպասելով իրար։ Ինքը ուշացել է մի քիչ և առանց շուրջը նայելու նստել է «հարմար դիրքում», ես էլ արդեն նստած եմ եղել իմ «հարմար դիրքում»։ Ոչ ես եմ նայել պատնեշի մյուս կողմը, ոչ էլ նա։

Երբ հաջորդ օրը պատմեցի մեր ժամադրության մասին Ադոնցի մտերիմ բարեկամ Հ. Ջավրյանին[3], սա պատասխանեց խնդալով.

— Տարօրինակ է, Ադոնցը ցրված մարդ չէ։ Անպատճառ միտքը մի բանով զբաղված է եղել։

---

[3] Պ. Հ. Հովհաննիսյան, Սիմոն Վրացյանի նորահայտ նամակը Նիկողայոս Ադոնցին, Երկիր, 5. VI. 1994։

[4] Ս. Վրացյան, Ն. Ադոնցի պատմական ուսումնասիրությունները (Հայրենիք, Բոստոն, 4. XI. 1948)։ Հմմտ. նաև Ազդարար, Բեյրութ, 6, 13. I. 1949։ Հատկանշական է, որ նույն օրերին՝ 1948 թ. նոյեմբերի 28-ին, Համաստեղին ուղղված նամակում Ս. Վրացյանը հիացմունքով գրում է. «Ադոնցի հատորը տեսա՞ր՝ Խոնդկարյանի լույս ընծայած։ Ինչպիսի՜ հաճույքով կարդացի «Տագրատունիների փառքը»։ Զմայլանքը զսպելով հանգիստ չեղինակ որոշ մտքերուն, չեմ կրնար բաժնվիլ գիրքեն։ Գիտնական մարդը այսպես կ՚ըլլա՞–ո՞ր մեր փառքերի գործներու» (տե՛ս ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1997, № 2, էջ 148)։

* Ընդգծումները հուշագրողինն են—Պ. Հ.։

Այո, Ադոնցի միտքը այդ օրերին գրավված էր «մի բանով»։ Նա և Ահարոնյանը[4] հղացել էին մի «հանճարեղ» միտք. հիմնել մշակութային մի մեծ ընկերություն, հրատարակել մի մեծ ամսագիր, որի շուրջ համախմբվելու էր տարագիր մտավորականությունը։ Պրոֆ. Ադոնցին և ինձ հանձնարարված էր կազմել ընկերության և ամսագրի ծրագրի նախագիծը։ Ահա այդ գործի համար էր մեր ժամադրությունը կաֆե Վերսայլում։

Հետաքրքրության համար պատմեմ այդ ձեռնարկի սկիզբն ու վախճանը, որպես հուշ անցյալի, բայց ոչ հույս ապագայի։ Հայ տարագրությունը հետզհետե սկսում էր ուշքի գալ Լոզանի անիծյալ դաշնագրի շոշոփից[5]։ Բնականաբար, առաջին շարժվողը պիտի լիներ մտավորականությունը։ Փարիզում համախմբված էին ամեն հասակի և ընկերային վիճակի հայ մտավորականներ՝ Պոլսից, Թիֆլիսից, Հայաստանից, Ռուսաստանի զանազան մասերից։ Սրճարաններում, ամեն երեկո, հուզումնալից վեճեր էին տեղի ունենում. վերաքննում էին անցյալը, պատասխանատուներ էին փընտրում, նոր ուղիներ հարթում, ջահելները՝ Սեն Միշելի կաֆեներում, երեցները՝ Էտվալի շուրջը, ուր, Ավընյու Քլիբրոյի վրա, գտնվում էր Հ[այաստանի] Հ[անրապետության] պատվիրակությունը։

Վերաքննություն և նոր ուղիներ։ որոնում տեղի էր ունենում և Հ[այաստանի] Հ[անրապետության] պատվիրակության շուրջը համախմբված մտավորականների շրջանում։ Թրոկադերո հրապարակի սրճարաններից մեկում, շաբաթը մի քանի երեկո հավաքվում էին Ա. Ահարոնյանը, Մ. Վարանդյանը[6], պրոֆ. Ն. Ադոնցը, որ արդեն պատրաստվում էր Բրյուսել փոխադրվելու, Ռ. Բերբերյանը[7], Ա. Ջամալյանը[8], Ա. Վաչյանը[9], Հ. Ջավոյանը, Ա. Խատիսյանը[10], Ա. Հանրմյանը[11] և ուրիշներ։ Մի բաժակ կաֆե կրեմի կամ բուրդո բլոնի շուրջ, մինչև ուշ գիշեր, քննում էին օրվա հարցերը և գործունեության նոր ուղիներ էին ներկայացնում։

Այդտեղ էր, որ Ավ. Ահարոնյանը առաջարկ բերեց հիմնելու մշակութային մի մեծ ընկերություն, որ պիտի ունենար Հայկական ճեմարան, հրատարակչական մաս, մի մեծ ամսագիր և այլն։ Նա առիթ էր ունեցել այս նյութի մասին խոսելու Բրյուսելից մեծահարուստ վաճառական Խորասանճյանի[12] հետ, որ շատ հավանել էր և խոստացել նյութապես աջակցել ձեռնարկին։

Գաղափարը հիանալի էր և վեճ չվերցնող։ Սակայն ինչպե՞ս իրականացնել։ Որտեղի՞ց գտնել պահանջված մեծ գումարը։ Ահարոնյանը հույս հայտնեց, որ կարելի կլինի հետաքրքրել Գալուստ Գյուլբենկյանին[13] ճեմարանի համար հիմնադրամ տրամադրելու։ Պրոֆ. Ադոնցը դրեթե համոզված էր, որ մեծահարուստ Արր. Ղուկասյանը[14] կնվիրեր ամսագրի համար պահանջված դրամը։ Խորասանճյանի խոստումը արդեն ապահովված էր...

Որոշվեց, որ մշակութային ընկերության և ամսագրի ծրագրի նախագիծը պատրաստենք Ադոնցը և ես։ Կազմեցինք։ Փառավոր գործ պիտի դուրս գար։ Մի մեծ ու լայնաճյուղ, զուտ մշակութային կազմակերպություն, եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, երկու միլիոն ֆրանկ հիմնական դրամագլխով, որ պիտի տար Գ. Գյուլբենկյանը։ Փարիզում պիտի հիմնվեր Հայկական ճեմարան նույն Գյուլբենկյանի և Խորասանճյանի նյութական օժանդակությամբ։ Փարիզում պիտի հրատարակվեր մի հաստ ամսագիր Արր. Ղուկասյանի աջակցությամբ։ Պիտի հաստատվեր հրատարակչական գործ։ Հայոց պատմության մեջ նմանը չտեսնված մի կազմակերպություն։

Վերջը՞։ Վերջը՞ ինչ եղավ, պիտի հարցնե այս ընթերցողը։

Վերջը եղավ այն, ինչ որ հաճախ պատահում է հայ իրականության մեջ։

Կարծեմ մի տարուց ավելի տևեցին «նախապատրաստական» աշխատանքները և բանակցությունները։ Գալուստ Գյուլբենկյանը, հույսեր ներշնչելուց հետո, մերժեց դրամ տալ մշակութային ընկերության և ճեմարանի

համար՝ այն առարկությամբ, թե ի նրր չի հավատում, թե հնարավոր է արտասահմանում պահել հայությունը։

Խորասանճյանը խոսք էր տվել Գրիգորիս վարդ. Պալարյանին[15] Մասսեյում շինել հայոց եկեղեցի և ի վիճակի չէր այլևս մեծ դումար տրամադրել ճեմարանին։

Ա. Ղուկասյանը ասել էր Ադոնցին. «Պատրաստ եմ ամսագիրը իմ միջոցներով սպել իմ սպարանում, բայց խմբագիրների ծախսը դուք պիտի հոգաք»։ Ադոնցը պահանջել էր, որ Ղուկասյանը հանձն առնի հոգալ ամսագրի բոլոր ծախսերը։

Մի խոսքով՝ լեռը ծնեց մուկ։

Ադոնցի՝ Բրյուսել փոխադրվելուց հետո, շուտով մեր Տյոկագիրը հրապարակի հավաքույթներին էլ վերջ դրան[16]։

Բրյուսելի համալսարանում Ադոնցը հայոց պատմության պրոֆեսորի պաշտոն ուներ և դասախոսություններից ազատ օրերին դալիս էր Փարիզ «հայկական օդ շնչելու համար»։ Ներկա էր գտնվում մեր «Գրական ակումբի»[17] հավաքույթներին։ Հաճախ հանդիպում էինք այս կամ այն սրճարանում։ Մեր բարեկամությունը ավելի ես սերտացավ իմ «Վեմ» հանդեսի[18] հրատարակությունից հետո, որի առաջին թիվը բացվեց նրա մի հոդվածով Խաչատուր Աբովյանի մասին[19]։ Պատմական որոշ հոդվածների ձեռագրերը ես ուղարկում էի նրան և նրա հավանությունը առնելուց հետո միայն տալիս էի հրատարակության։

Ի միջի այլոց, հիշեմ այստեղ մի դեպք։ «Վեմ»-ը լույս տեսնելուց հետո Կիպրոսից մի ընդարձակ «ուսումնասիրություն» ստացա՝ նուիրած Մազսուտյան ստորագրությամբ։ Հեղինակը կցել էր և՛ իր լուսանկարը, և՛ ինքնակենսագրությունը՝ թախանձագին խնդրանքով, որ անպատճառ հրատարակեմ «Վեմ»-ում։ Ձեռագիրը ուղարկեցի Ադոնցին և շուտով ստացա հետ՝ Ադոնցի երկտողով. «Այ տղա, որտեղի՞ց ես ճարել այս հոսհոսին։ Նեսի՛ր դամբյուղը»։

Ես ձեռագիրը վերադարձրի հեղինակին։ Մի քանի ամիս անց Մազսուտյանի այդ «ուսումնասիրությունը» երևաց «Հայրենիք» ամսագրում[20]։ Ադոնցը կարծել էր, որ ես եմ ուղարկել, և մի խիստ լվացողական էր գրել այդ առթիվ։

Վերջը պարզվեց, որ Մազսուտյանը դեմել էր խորամանկության։ Ձեռագիրը ուղարկել էր «Հայրենիք» ամսագրի խմբագրություն, գրելով, որ իբր թե, ես խնդրել եմ «Վեմ»-ի համար, բայց ինքը դերադասում է տալ «Հայրենիքին»-ին։ Մազսուտյանը մաքուր և դյուրընթեռնելի ձեռագիր ուներ, սիրում էր երևալ բոլոր թերթերում, բայց անարժեք պատմագետ էր[21]։

Որոշ չափով ես Ադոնցին եմ պարտական, որ Հ. Ջավրյանը դարձավ «Վեմ»-ի մնայուն աշխատակից՝ տալով մի շարք լուրջ ուսումնասիրություններ Սայաթ-Նովայի, Մխիթարյան միաբանության, լեհահայերի և այլ նյութերի մասին[22]։ Ջավրյանը գրում էր ռուսերեն, և ես թարգմանում էի հայերեն։ Իմ պնդումի վրա նա սկսեց աշխատակցել և «Հայրենիք» ամսագրին։

Զբաղված լինելով համալսարանական դասախոսություններով և պատմական ֆրանսերեն ուսումնասիրություններով՝ Ադոնցը չկարողացավ շատ աշխատակցել «Վեմ»-ին[23], բայց միշտ մոտ մնաց նրան և իրեն համարում էր «Վեմ»-ի աշխատակիցների ընտանիքի մտերիմ մի անդամ։

* * *

Իմ ծանոթությունը պրոֆ. Նիկողայոս Ադոնցի հետ սկսվում է Պետերբուրգից, ուր ես ուսանող էի համալսարանի իրավաբանական բաժնում[24], իսկ նա նոր էր հրավիրվել հայագիտության դասախոս[25]։

Եթե չեմ սխալվում, 1908-ի վերջերին էր կամ 1909-ի սկիզբը։ Ն. Ադոնցը պիտի տար իր մուտքի դասախոսությունը։ Շատերիս համար անծանոթ

անուն էր։ Համբարձում Տերտերյանը[26], Սարգիս Սրապիոնյանը[27] և ես որոշեցինք երբեք կարելի է շատ ուսանողներ լցնել լսարանը, որպեսզի մեծ բազմության առջև խոսի մեր հայրենակիցը։ Բայց մեծ բազմություն չհավաքվեց. ո՞վ ականջ ուներ լսելու ինչ որ «Ծաթ ժողովրդի մասին», որ դասախոսության նյութն էր հայտարարված[28]։ Հազիվ մի քանի տասնյակ ուսանողներ և ուսանողուհիներ էին եկել, մեծ մասը հայեր և մի քանի պրոֆեսորներ, որոնց մեջ և Ն. Մառը[29]։

Դասախոսության նյութը, ինչպես ասացի, «Ծաթ ժողովրդի մասին» էր։ Ովքե՞ր էին այդ ծաթերը և ի՞նչ գործ ունեին նրանք ցրտաշունչ Պետերբուրգի համալսարանի պաղ լսարանում։ Դասախոսը կարճահասակ, նիհար, թաշկինակով ճակատի քրտինքը սրբելով, ճղճիմ ձայնով ու դժվար լսելի ռուսերենով, անհույզ բաներ էր ասում անծանոթ ժողովրդի մասին, որ ինչոր հարաբերության մեջ է եղել մեր նախնիների հետ..

Լավ, որ չէր հաջողվել մեզ մեծ բազմություն հավաքելու։ Ես լսարանից հեռացա առանց ծանոթանալու դասախոսի հետ։ Եվ միայն շաբաթներ վերջը առիթ ունեցա ծանոթանալու հետը։

Պետերբուրգի հայ ուսանողության միությունը կոչվում էր «Ժողով»։ «Ժողով»-ի վարչության հանձնարարությամբ Խ. Կարճիկյանը[30] և ես տեսակցություն ունեցանք պրոֆ. Ադոնցի հետ։ Չեմ հիշում ինչ գործի համար։ Տեսակցության ընթացքին պարզվեց, որ շատ քիչ ուսանողներ են ներկա լինում հայագիտական դասախոսության, և Ադոնցը բավական դառնացած էր։ Նույնիսկ վախ էր հայտնում, որ դասախոսությունները կընդհատվեն։ Առանց իրեն մի բան ասելու, Կարճիկյանի հետ որոշեցինք «մոբիլիզացիայի ենթարկել» մեր տղաներին։

Հաջորդ դասախոսության Ադոնցը լսարանում տեսավ 25—30 ուսանողներ, և այնուհետև այդ թիվը երբեք չպակասեց, որով ոչ միայն Ադոնցի պրոֆեսորական վարկը բարձրացավ հաշվ համալսարանի վարչության, այլև ամրացավ հայագիտական ամբիոնի դիրքը։ Պետք է ասել, որ առավելապես Խաչ. Կարճիկյանի ջանքերով հայագիտական լսարանը միշտ լիքն էր լինում։ Մեծ մասամբ դաշնակցական կամ համակիր ուսանողություն էր ներկա լինում Ադոնցի դասախոսություններին։ Նա այդ տեսնում էր և թեև հայացքներով պահպանողական մարդ էր՝ հակառակ ծայրահեղ ձախակողմյան գաղափարների, իր հարաբերությունները ազատամիտ ուսանողության հետ մտերիմ էին։ Թե՛ համալսարանում և թե՛ եկեղեցական հոգաբարձության մեջ նա պաշտպան էր ուսանողական դատի[31]։

Պետերբուրգից շատ հիշողություններ չունեմ Ադոնցի մասին։ Իմ հարաբերությունները նրա հետ միշտ եղել են պաշտոնական հողի վրա, իբրև «Ժողով»-ի անդամներից մեկը։ Երևի այդ էր պատճառը, որ երբևիցե նա իմ անունս սված լիներ. միշտ կոչում էր «ազգապետ», անմեղ հեգնանքով, իհարկե։

Այնուհետև, ես Ադոնցին հանդիպեցի Փարիզում, տասնյակ տարիներ վերջը։ Իմ տարագրության ուղին անցել էր Հայաստանից Միջին և Մերձավոր Արևելքի վրայով։ Ադոնցը անկախ Հայաստանում չէր եղել և տարագրվել էր հյուսիսային ճանապարհով։ Իրար հանդիպեցինք Սենի ափին, իբրև քաղաքական սուրգիրներ։ Կյանքը վատ կատակ էր խաղացել մեր գլխին. «աջն» ու «ձախը» իրար էին խառնվել, նախկին անջրպետները խորտակվել էին և այժմ մենք ավելի մոտ էինք զգում՝ իրար։

Հետաքրքրական է, որ Ռուսաստանում Ադոնցը հոգեբանորեն ավելի մոտ էր մեզանից ավելի ձախ սոցիալ-դեմոկրատների հետ։ Դաշնակցական ուսանողներին նա հաշվի էր առնում. իբրև ուժ, բայց ավելի մտերիմ էր նույնիսկ բոլշևիկ սոցիալ-դեմոկրատների հետ։ Ընդհանուր երևույթ էր այդ. հայ պահպանողականներն, հաճախ, մեկ ջակատ էին կազմում ծայրահեղ սոցիալիստների հետ Հ. Հ. Դաշնակցության դեմ՝ հետևելով ուկրաինական իմաստությանը. «թող ավելի դառն լինի, միայն թե տարբեր բան լինի»։ Իրենց

հերթին՝ ծայրահեղ ձախակողմյանները գործում էին ձեռք-ձեռքի պահպանողականների հետ և աշխատակցում էին պահպանողական թերթերին։ Նույնը չէ՞ և այժմ Սփյուռքում։ Հայ պահպանողական ռամկավարներն ու բոլշևիկ համայնավարները դաշնակից ու կինակից են հակադաշնակցական պայքարում։

Տարակարությունը ցնցեց շատերի մտքերը և դրեց նրանց բնական հունի մեջ։ Անգլիական իմաստով պահպանողական՝ Ադոնցը Սփյուռքում էլ աշխարհայացքով մնաց հավատարիմ պահպանողականության, բայց (ապրումներով) ավելի դաշնակցական ոլորտում էր գտնվում։ Խառնվածքով մարտիկ չէր, պայքարող կազմակերպության անդամ չէր կարող լինել, բայց իր ազգային վերաբերմունքով անպայման ուղեկից էր Հ. Հ. Դաշնակցության։

Ադոնցը գերազանցապես գիտնական էր, վերջին մոհիկաններից մեկը հայ պատմագետների շարքում։ Տարագրությունից առաջ, մինչև 1920 թ. նա արդեն բարձր աստիճանի հասած գիտուն էր. իր «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում»[32] չգերազանցված պատմական հոյակապ հատորը դասական գործ է պատմագիտության ասպարեզում։ Միայն այդ գրքով Ադոնցը կարող է դասվել անմահների շարքում։

Տարագրության մեջ ևս Ադոնցը շարունակեց իր գիտահետազոտական աշխատանքը՝ ավելի ևս խորանալով հայ-բյուզանդական պատմության ուսումնասիրությունների մեջ[33]։

Ես հիշում եմ իմ մի զրույցը բյուզանդագետ պրոֆեսոր Գրեգուարի[34] հետ Նյու-Յորքում՝ Կոստան Զարյանի[35] հետ միասին։ «Ադոնցը,—ասաց բելգիացի բյուզանդագետը,—Բյուզանդիայի պատմությունը դարձրեց Հայաստանի պատմություն»։ Ավելի ճիշտ կլիներ ասել՝ հայերի պատմություն։ Ադոնցը երևան հանեց ու ներկայացրեց մի շարք ականավոր հայեր, որոնք զեկավար դեր են կատարել Բյուզանդիայի քաղաքական, ռազմական և մշակութային կյանքում։ Հայ կայսրեր, հայ զորավարներ, հայ զորամասեր, հայ պետական վարիչ դեմքեր—իրավունք ուներ Գրեգուարը։ Նա կարող էր ավելացնել նաև, որ այդ հայերի ձեռքով էլ Բյուզանդիոնը մեծապես նպաստեց Հայաստանի քայքայման։

Զարմանալի երևույթ է. հայ մարդը օտարի ծառայության մեջ գրեթե դադարում է հայ լինելուց։ Բյուզանդիոնը բացառություն չէր։ Այսօր նույնը տեսնում ենք և Ռուսաստանում։

Հայաստանի Հանրապետությունը կործանվեց նաև «ականավոր» հայերի դավերով իրենց մայր հայրենիքի դեմ։ «Եթե,—ասում էր դառնությամբ Ադոնցը,—եթե Բյուզանդիայի հայ կայսրերն ու հայ զորավարները հետաքրքրվեին ու զորձեին հօգուտ հայերի, Հայաստանի ճակատագիրը կարող էր տարբեր լինել»։ Նույնը կարող ենք ասել և Ռուսաստանի հայ զորավարների և հայ «կայսրերի» մասին։

Եթե Լորիս-Մելիքովները[36], Կարախանները[37], Միկոյանները հետաքրքրվեին և աշխատեին օգտակար լինել Հայաստանին, հայության ճակատագիրը կարող էր տարբեր լինել։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Ն. Ադոնցը Բրյուսելից Փարիզ պիտի գար»—1931 թ. նոյեմբերից Ն. Ադոնցը մշտապես բնակվում էր Բրյուսելում, քանզի նշանակվել էր տեղի Ազատ համալսարանի Հայագիտության ամբիոնի վարիչ։

2. „Par pneumatique"—Փոստային արագ հաղորդակցության մի տեսակ։ Օգտագործված է փոխաբերական՝ կշտամբելու իմաստով։

3. Հ. Ջավրյան (Ջավոին)—Ազգային հասարակական գործիչ, պատմաբան։ Ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ Ն. Ադոնցի անձնական բարեկամներից։

4. Ա. Ա. Ահարոնյան (1866—1948)—Գրող, հասարակական-քաղաքական գործիչ, իրավաբան։ Սովորել է Լոզանի և Սորբոնի համալսարաններում։ Հայոց Ազգային խորհրդի նախագահ, Հայաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահ, Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար։

5. Լոզանի դաշնագիրը կնքվել է Լոզանի միջազգային կոնֆերանսի (20. XI. 1922—24. VII. 1923) ավարտական նիստի ժամանակ։ Հենց այստեղ է գերեզմանվել Հայկական հարցը։ Հետաքրքիր է, որ դաշնագրում ոչ մի հիշատակություն չկա Հայկական հարցի և ընդհանրապես հայերի ու Հայաստանի մասին։

6. Մ. Վարանդյան (1874—1934)—Հրապարակախոս, պատմաբան, դիվանագետ, Հ. Հ. Դաշնակցության գաղափարախոս-տեսաբան։ Հեղինակն է «Հ.Հ. Դաշնակցության պատմություն» երկհատորյակի (Փարիզ, 1934—1950)։

7. Ռ. Հ. Բերբերյան (1873—1942)—Մանկավարժ, գրականագետ, մշակութային գործիչ։ «Հայ համայնք» շաբաթաթերթի խմբագիր։ Եղել է Ն. Ադոնցի մտերիմներից։

8. Ա. Ջ. Ջամալյան (1882—1940)—Մանկավարժ, լրագրող։ Ավարտել է Բեռլինի համալսարանը։ «Հորիզոն» թերթի խմբագիր։ Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ։ Հ. Օհանջանյանի կառավարությունում հաղորդակցության նախարար, Հ. Հ. Դաշնակցության բյուրոյի անդամ (1919—1933)։

9. Ա. Վաչյանց (1863—?)—Հասարակական գործիչ։ Ճարտարագետ, ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանի տեխնիկական ֆակուլտետը։ Բաքվի Հայոց ազգային խորհրդի անդամ։

10. Ա. Հ. Խատիսյան (1876—1945)—Հասարակական-քաղաքական գործիչ։ Սովորել է Մոսկվայի և Խարկովի համալսարանների բժշկական ֆակուլտետներում։ Թիֆլիսի քաղաքագլուխ, Հայոց Ազգային բյուրոյի նախագահ, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, վարչապետ (1919—1920)։

11. Ա. Հանըմյան (1875—1945)—Հասարակական գործիչ, մանկավարժ, հրապարակախոս, քիմիկոս։ Հայոց Ազգային և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների ընդհանուր քարտուղար։

12. Վ. Խորասանճյան—Մեծահարուստ, ազգային բարերար, «Եգիպտոսի առևտրական ձեռնարկումների ընկերության» բաժնետեր։ Բրյուսելի հայկական համայնքի ղեկավարներից։

13. Գ. Ս. Գյուլբենկյան (1869—1955)— Ազգային բարերար, նավթարդյունաբերող, «Թուրքական նավթային ընկերության» նախագահ։ Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ (1930—1932)։

14. Ա. Ղուկասյան—Մեծահարուստ, նավթարդյունաբերող, ազգային բարերար։ Ն. Ադոնցի անձնական բարեկամներից։ Նա է հովանավորել Ն. Ադոնցի «Պատմական ուսումնասիրություններ» (Փարիզ, 1948) ժողովածուի հետմահու հրատարակությունը։

15. Գր. Պալաքյան (1879—1934)—Եկեղեցական գործիչ, պատմաբան։ Եղել է Եվրոպայի, Մանչեստրի և Մարսելի հայոց հոգևոր առաջնորդ, Արևմտյան Եվրոպայի առաջնորդական տեղապահ։ Ն. Ադոնցի հետ ունեցել է նամակագրական կապ։

16. Այս առիթով ևս Ս. Վրացյանը անդրադարձել է Ահարոնյանի և Ն. Ադոնցի նույն մտահղացմանը. «Ահարոնյանը և պրոֆ. Ն. Ադոնցը աշխատում էին երկու մեծահարուստ հայերից՝ Գալուստ Գյուլբենկյանից և Վահան Խորասանճյանից մի խոշոր գումար ստանալ մշակութային ընկերության և գրական ամսագիր հիմնելու համար։ ...Հարուստ պարոնները խոստումներով օրորեցին և, ի վերջո, մերժեցին դրամ տալ։

...Փարիզում, հայ մտավորականությունն այդ օրերին, Ահարոնյանի և պրոֆ. Ն. Ադոնցի գլխավորությամբ, մշակութային մեծ-մեծ ծրագրեր էր որոճում՝ մշակութային միություն հիմնել, երկրորդական վարժարան բանալ, հրատարակչական ձեռնարկներ, գրական ամսագիր։ Դիմում էր եղել Գալուստ Գյուլբենկյանին, որ այդ նպատակով որոշ գումար հատկացներ—մերժում։ Դիմում էր եղել և ուրիշ հարուստների՝ միևնույն արդյունքով» (Ս. Վրացյան, Անձինք նվիրեալք, Բեյրութ, 1969, էջ 162, 206)։

17. «Գրական ակումբը» ստեղծվել է 1928 թվականին։ Միավորում էր Ֆրանսիայում բնակվող բոլոր հայ գրողներին։ Ն. Ադոնցը եղել է ֆրանսահայ գրողների ընկերության առաջին նախագահը (1928—1930)։

18. «Վեմ»—Մշակույթի ու պատմության երկամսյա, ապա եռամսյա հանդես, լույս է տեսել Փարիզում 1933—1939 թթ. ընթացքում՝ Սիմոն Վրացյանի խմբագրությամբ։

19. Խոսքը Ն. Ադոնցի «Խաչատուր Աբովյանի վախճանը» (տե՛ս «Վէմ», Հ. Ա., էջ 5—13) հոդվածի մասին է։

20. Ն. Մաղսուդյան (1898—1958)—Կիպրահայ կրթական գործիչ, մանկավարժ, հայագետ։ 1934 թ. Մաղսուդյանը «Հայրենիք» ամսագրում տպագրել է մի քանի հոդվածներ։ Այստեղ խոսքը հավանաբար վերաբերում է նրա «Հայ վաճառականությունը» հոդվածին (տե՛ս «Հայրենիք», 1934, հուլիս, № 9, էջ 112—124)։

21. Անհետաքրքիր չէ նշել, որ ամերիկահայ նշանավոր բանասեր Հ. Քյուրտյանը սույն հեղինակի աշխատանքի մասին հայտնել է նույնպիսի կարծիք՝ «Պարոն Ն. Մաղսուդյան կրնա անիկա պատմագիտություն կոչել, սակայն դժբախտաբար բան հեքիաթ է, իսկ ռամկորեն՝ մասալ» (տե՛ս «Հայրենիք», 1935, № 6, էջ 160)։

22. «Վէմ»-ում լույս են տեսել Հովհաննես Ջավրյանի «Սայաթ-Նովա», «Ի. Թոքմանյանի կյանքն ու գործը», «Պրոֆ. Ն. Ադոնցի վերջին գործերը», «Թիֆլիսի բարբառի վնասաբարերը», «Հայաստանի մշակութային պատմությունը», «Պարսկաստանի հեղափոխությունը և Մելքոն խանը», «Գաբրիել Սունդուկյանը» հոդվածները (տե՛ս «Վէմ», 1933—1936)։

23. Բացի Դավիթ Բեկին նվիրված վերոհիշյալ հոդվածից, Ն. Ադոնցը «Վէմ»-ում տպագրվել է ևս մեկ անգամ՝ գրախոսելով Մ. Աբեղյանի «Նոր հայերենի քերականություն» գերմաներեն աշխատությունը («Վէմ», 1936, № 4, էջ 46—51)։

24. Ս. Վրացյանը իրավաբանական ֆակուլտետում սովորել է 1908—1910 թթ.։

25. Ն. Ադոնցը Պետերբուրգի համալսարանի դասախոս՝ պրիվատ-դոցենտ է հաստատվել 1909 թ. հուլիսի 1-ին, պրոֆեսոր՝ 1916—1920 թթ.։

26. Հ. Տերտերյան (1884—1955)—Դիվանագետ, պետական գործիչ։ Եղել է Հայաստանի խորհրդարանի անդամ, Ս. Վրացյանի կառավարությունում՝ ֆինանսների և խնամատարության նախարար, Քաջազնունու գլխավորած կաբինետի անդամ և ֆինանսների նախարար։

27. Ս. Լ. Սրապիոնյան (1883—1937)—Խորհրդային պետական և կուսակցական գործիչ, առավելապես հայտնի է Լուկաշին կեղծանվամբ։ Ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը (1910)։ Խորհրդային տարիներին զբաղեցրել է կուսակցական և պետական բարձր պաշտոններ, եղել է Հայկոմկուսի ԿԿ քարտուղար, Ժողկոմխորհի նախագահ, Անդրֆեդերացիայի կառավարության նախագահի տեղակալ, առևտրի ժողկոմ և այլն։

28. Ն. Ադոնցի սույն դասախոսությունը հետագայում հրատարակվել է Ռուսաստանի լուսավորության նախարարության գիտական հանդեսում (հ. 32, Ս. Պետերբուրգ, 1911, էջ 238—249), տե՛ս նաև այդ հոդվածի հայերեն թարգմանությունը («Հայ տառերի ծագման մասին», տե՛ս «Հանդես ամսօրյա», 1912, էջ 256—271)։

29. Ն. Յա. Մառ (1864—1934)—Ականավոր հայագետ, Ս. Պետերբուրգի համալսարանի հայ-վրացական բանասիրության ամբիոնի վարիչ։ Ղեկավարել է Ն. Ադոնցի համալսարանական ուսումնառությունը, եղել է նրա մագիստրոսական և դոկտորական դիսերտացիաների պաշտոնական ընդդիմախոսը։ Ն. Ադոնցի հետ ունեցել է նամակագրություն։

30. Խ. Կարճիկյան (1882—1918)—Իրավաբան, հասարակական-քաղաքական գործիչ։ Ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը (1910)։ Եղել է Անդրկովկասյան կոմիսարիատի ֆինանսների կոմիսար (1917—1918), Հայաստանի Հանրապետության անդրանիկ կառավարության ֆինանսների նախարար (1918)։

31. Իր հուշերի գրքում Ս. Վրացյանը քիչ այլ կերպ է ներկայացնում նշված իրադարձությունները։ Նկատի ունենալով ընդհանրապես Ն. Ադոնցի վերաբերյալ հուշագրությունների չափազանց սակավ լինելը՝ անհրաժեշտ ենք համարում այստեղ ներկայացնել նաև այդ վկայությունը. «...Համալսարանական դեպքերից առանձնապես հիշում եմ Նիկ. Ադոնցի առաջին դասախոսությունը։ Նա հրավիրված էր դասախոսելու հայագիտական բաժնում, իբրև Նիկ. Մառի օգնական, պայմանով, որ եթե չեմ սխալվում, առնվազն 10—15 ունկնդիր ունենար։

Առաջին դասախոսությանը ներկա էին բազմաթիվ ուսանողներ, մեծ մասամբ հայեր, այլև պրոֆեսորներից շատերը։ Դասախոսության նյութը, նույնիսկ ինձ, ճեմարանականիս համար անծանոթ, ծաթ ժողովրդի մասին էր։ Ադոնցը պերճախոս չէր, նյութն էլ չոր ու անհետաքրքրական։ Դասախոսի հետ միասին մենք էլ բավական քրտնեցինք։ «Սատանան տանի, մեր ի՞նչ գործն է ինչ-որ այդ ծաթ ժողովուրդը», լսում էի շուրջս։

Հաջորդ դասախոսության հազիվ 10—15 հոգի ներկա էր։ Կարող էր Ադոնցի պաշտոնն իսկ վտանգվել, որ կլիներ խայտառակություն հայ ազգի համար։ Մեր կոմիտեն պարտադիր հեր-

բապահովություն նշանակեց բոլոր ուսանողների համար, և Ադոնցի դասախոսություններն ունեցան ունկնդիրների օրինական լիկը։ Եվ Ադոնցը այնուհետև մտերմացավ ուսանողության հետ» (տե՛ս Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, Դեպքեր, դեմքեր, ապրումներ, Գիրք Բ. Բեյրութ, 1960, էջ 118)։

32. Սա Ն. Ադոնցի մագիստրոսական դիսերտացիան էր, որը լույս էր տեսել Ս. Պետերբուրգում՝ «Армения в эпоху Юстиниана. Политическое состояние на основе нахарарского строя» խորագրի ներքո (1908), երկրորդ հրատարակությունը՝ Երևան, 1971։ Տե՛ս նաև սույն մենագրության Գառնիկ Գյուղալյանի հայերեն մասնակի՝ տպագրված «Ակոս» ամսագրում (1947—1949) և առանձին գրքով (Բեյրութ, 1949), Ա. Բ. Խոնդկարյանի ու Է. Հ. Խոնդկարյանի հայերեն ամբողջական (Ե., 1987), ինչպես նաև պրոֆ. Նինա Գարսոյանի անգլերեն (Լիսաբոն, 1969) թարգմանությունները։

33. Ն. Ադոնցի՝ ֆրանսերեն լեզվով լույս տեսած հիմնական աշխատություններ առանձին հատորով հրատարակել է բելգիացի հայագետ Ժերար Գարիտը՝ „Etudes Arméno-Byzantines" (Լիսաբոն, 1965)։

34. Անրի Գրեգուար (1881—1964)—Բելգիացի բյուզանդագետ և հայագետ։ Նա է Ն. Ադոնցին հրավիրել դասախոսելու Բրյուսելի Ազատ համալսարանում։ Հեղինակ է հայ-բյուզանդական հարաբերություններին նվիրված արժեքավոր աշխատությունների։

35. Կ. Ք. Զարյան (1885—1969)—Նշանավոր դրող։ Աշխարհի տարբեր համալսարաններում (Երևան, Փարիզ, Նյու-Յորք, Բեյրութ և այլն) դասավանդել է գրականություն և արվեստի պատմություն, հայագիտական առարկաներ։ Ն. Ադոնցի հետ ունեցել է նամակագրություն։

36. Մ. Տ. Լորիս-Մելիքով (1825—1888)—Ռուսաստանի ռազմական և պետական ականավոր գործիչ, գեներալ-ադյուտանտ։ Եղել է Դաղստանի և Թերեքի մարզերի պետ, Աստրախանի, Սարատովի, Եկատերինոդարի և Խարկովի գեներալ-նահանգապետ, Ռուսաստանի ներքին գործերի նախարար (1880—1881), ունեցել է դիկտատորական լիազորություններ։

37. Լ. Մ. Կարախան (1889—1937)—Խորհրդային Միության պետական գործիչ, դիվանագետ։ Եղել է խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմի տեղակալ (1918—1919), Լեհաստանում (1921—1923), Չինաստանում (1923—1927) և Թուրքիայում (1934—1937), ԽՍՀՄ դեսպան, ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ (1927—1934)։ Ղեկավարել է Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը։